

ծածուխն : Նշանաւոր է այս կերպատներու սովորութիւնը , դժուարամաշու-
թիւնը եւ անխարդախութիւնը :

Չախ-ձորը թաղը քաղաքիս բոլոր թաղերուն առաջինն է թէ բազմա-
մարդութեան եւ թէ ընդարձակութեան կողմանէ : 400-ի չափ տուն կայ , 90-ը
բողոքականաց : Ոմանք կ'անուանեն՝ Չաղացքի-ձոր՝ ձորերու մէջ քանի մը
ջաղացք շինուած լինելուն պատճառաւ : Թաղս շինուած է բարձր լեռանց վրայ
եւ ունի քանի մը մասնաւոր թաղեր , տաներն ընդհանրապէս շինուած են
բարձր դիրքով , դրեթէ չկայ տափարակ վայր , ամէն տուն ընդարձակ պարտէզ
ունի պտղատու ծառերով , դռնդռոյն ծաղիկներով եւ կարկաչահոս առուակ-
ներով : Ունի մաքուր օդ եւ առատ ու քաղցրահամ ջուր : Հայոց եկեղեցին կը
կոչուի Ս . Յակոբ :

Վեներիկ , Ս . Ղազար , 1900 , պրակ Ա . :

Հ . Ս . ԷՓՐԻԿԵԱՆ

Բ . — ԿԻՒՐԻՒՆ ԿԱՄ ԿԻՒՐԻՒՆ

Ունի աւան ընդ իշխանութեամբ Չափար Օղլուին , կառուցեալ առ ստո-
րոտով լերին , անցանէ եւ առու ընդ մէջ նորա : Բնակիչքն տաճիկք , իսկ յաղ-
դէս Հայոց են իբրեւ 400 կամ 500 տունք ըստ մեծի մասին պարապեալք ի վա-
ճառակոնութեան մանաւանդ վշոյ եւ կտուռոյ , զորս բերեալ ի Դրապղունոյ ,
եւ ի Կիւրին մաքրեալ եւ թափեալ սպիտակացուցանեն , եւ առաքեն յԱտանա
եւ ի շրջակայ երկիրս : Գլխարկ նոցա սրանկիւն երկայն , այն է քիւլաի . խօսք
նոցա եւ լնգու տարրեր յայլ քայրքառոյ հայոց եւ անսովոր մանաւանդ ըստ
հնչման . բայց ընթերցասէր են յոյժ եւ հետամուտ յուսանել : Ունին ի քաղաքի
եկեղեցի . եւ արտաքոյ քաղաքին մօտ ի Գանկալ մենաստան մեծաչէն , զոր
յաւուրց անաթ Սրբոյ Լուսաւորչին ասեն հիմնեալ : Ի սահմանս Կիւրինոյ լինի
խնձոր մեծ եւ քաղցրաճաշակ , ուստի սիրի ի վանաղան կողմանս :

Հ . ՂՈՒԿԱՍ ՎՐԳ . ԻՆՃԻՃԵԱՆ

Վեներիկ . 1806 , «Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի»

Գ . — «ՃԱՄԲՈՐԴՈՒԹԻՒՆ Ի ԲԱԲԵԼՈՆ ԸՆԴ ՀԱՅԱՍՏԱՆ»

Ժամ մ'ալ յառաջ երթալով կը մտնես Մանճըլըք ըսուած հայաբնակ
Դիւզը 50 տունով , որ ունի 200 բնակիչ , ամէնն ալ երկրագործ , դինավարժ եւ
քաջասիրտ , բայց անկիրթ . մէկ վանք մը Ս . Թորոս անուն՝ ուր կը նստի վի-
ճակին առաջնորդը . զպրոցն ու եկեղեցին ալ վանքին մէջ են : Գիւղին դիրքը
լեռնային է , օդը բարեխառն , հիւսիսային արեւելեան հովերը կը փչեն :

Այս գիւղէն 9 ժամու չափ հեռի ապառաժուտ ու լեռնային ճամբաներէ
յառաջ երթալով կը հասնիս Կիւրին գիւղաքաղաքն , որ Սվաղի նահանգին
կցորդ է եւ ունի 20 գիւղ , որոնց բնակիչները տաճիկ են եւ երկրագործ :

Կիւրին գիւղաքաղաքն ունի 2000-ի չափ տուն , որոնց 1250-ը ուղղափառ
Հայ , 90-ը հռոմէական եւ 10-ը բողոքական Հայոց է եւ 650 ալ տաճկաց :
Բնակիչներն ընդհանրապէս աղքատիկ են՝ բայց հիւրասէր . 4 եկեղեցի Հայոց ,

որոնց մէկը քարաշէն է 14 սիւներու վրայ կառուցեալ յանուն Ս. Աստուածածնի, միւս երեքը փայտակերտ են, Ս. Գէորգ, Ս. Փրկիչ, Ս. Սարգիս: 1 քարաշէն փոքրիկ եկեղեցի հռոմէական Հայոց, 1 ժողովարան բողոքականաց: 1 մեծ մզկիթ աշտարակաւոր, եւ մէկ քանի փոքրիկ աղօթարաններ (մեսիտ): 3 գպրոց Հայոց, 1 հռոմէական: Տանկաց դպրոց չգտնուելուն համար անկիրք մնացեր են: 1 բաղնիք, շուկայ մը, պարտէզներ: Հայերն ըստ մեծի մասին վաճառական են եւ միշտ Բերիոյ (Հալէպ) ու Տրապիզոնի հետ յարաբերութիւն ունին: Տաճիկները հիւսնութիւն եւ քանի մը ուրիշ արհեստներ կը գործեն:

Կիւրնոյ դիրքը լեռնային է, օդը բարեխառն, հիւսիսային հովերը պահաս չեն: Ունի երկու դետ, մէկը մէկ ժամու չափ հեռի տեղէ մը բխելով կու գայ կ'անցնի դիւղին մէջէն, ստոյգելով պարտէզներուն մէկ մասը կ'երթայ դէպի Տարեհատ, եւ միւսը քաղաքին հարուային կողմէն կէս ժամու չափ հեռի տեղէ բխելով կու գայ դիւղին պարտէզներուն մնացած մասը ստոյգելէ ետքը՝ կը միանայ սուաջինին:

ԲԱՐՈՒՆԱԿ ՊԵՅՒ ՖԵՐՈՒՆԵԱՆ

Յամի Տեառն 1847, սոյուած 1876.ին, Արմաշի մէջ, «Ճամբորդութիւն ի Բարիլոն քնդ Հայաստան»:

Դ. — ԿԻՒՐԻՆ—ՄԱՆՃԸԼԸՒԹ ԵՒ ՏԱՐԱՆԴԱ

Այս գաւառակներն եւս մասն են Սերաստիոյ արքեպիսկոպոսութեան, որոնք պիտի ամփոփեմ մէկ անուան ներքեւ, զի Տարանդա եւս այժմ Կիւրնոյ առաջորդութեան յանձնուած է Սոոյ կաթողիկոսէն, որուն իշխանութեան կը պատկանին ասոնք եւս՝ Տիվրիկի պէս. եւ կը կազմուին Սերաստիոյ վիճակին հարուային գաւառակներէն, միայն թէ դիւրին չէ ճշգիւ նըկարագրել զանոնք զատ զատ, մինչեւ հիմա եղած յաճախ փոփոխութեանց համար: Հիմա այս մասը կը բովանդակէ իր մէջը հետեւեալ Գաղաները:

ա. Կիւրին, բ. Գանդալ, գ. Թոնուզ, դ. Աղիզիէ որոնց մէջ կը գտնուին մեծ ու փոքր 4-500 դիւղ. եւ 100-120,000 բնակիչ, եթէ ենթադրենք Տէրէնտէն եւս 70-80 դիւղով եւ 20-30,000 բնակիչ, կ'ըլլան ամէնը մէկտեղ 120-150,000 բնակիչ, որոնց իրր 40,000 Հայ են. անորոշ գնելուս պատճառն այն է, որ նախ չկայ տակաւին ստոյգ մարդահամար եւ երկրորդ՝ չեմ վստահիր լիով առած տեղեկութեանցս: Հիմար կ'իջնեմ խօսելու ամէնուն վրայ ընդհանրապէս, մանաւանդ Հայ գտնուած տեղերն:

Կիւրին, սովորաբար կը կարծուի հին Կառնակը⁽¹⁾: Մեծն Վասիլ Մարաշի կողմէն Մամնուա երթալու ատեն առաւ ճամբուն վրայ Կեռոն անունով ամուր քաղաք մը: Դարձեալ Կիւրինէն շատ հեռու չէ, Ուզուն Եայլայի մէջ գտնուող աւերակ մը, որ Վէրան-Շէհը կը կոչուի, եւ կը կարծուի թէ Ժ. եւ ԺԱ. դարուն յիշատակուած Լարիսան կամ յաւէտ Մամնուան է: Կայ եւս այն դաղափարն՝ թէ Կիւրին մետասաներորդ դարուն յիշուած Խաւատանէք ամրոցն է, զոր Վասիլ Բ. կայսրը տուաւ Դաւիթ Արծրունիի, ժառանգութեամբ:

(1) Տեսնել՝ այս հատորին տուաքին պատմա-բանասիրական յօդուածը, Կիւրինի անու. Բին եւ տեղին մասին: